



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Դեկտեմբեր

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեկտեմբերի օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից 1 աստիճանով:




Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում +14...+17°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +6...+8°C, նախալեռնային շրջաններում՝ +9...+11°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +16...+20°C, նախալեռնային շրջաններում՝ +11...+14°C, Շիրակում՝ +3...+6°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +5...+8°C, նախալեռնային շրջաններում՝ +9...+11°C, Գեղարքունիքում՝ +4...+8°C (Ճամբարակ՝ +10°C), Լոռիում՝ +10...+13°C, Արմավիրում, Արարատում՝ +11...+13°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +2...+4°C, նախալեռնային շրջաններում՝ +6...+10°C:


Ամսվա ամենացածր ջերմաստիճանները դիտվել են Տավուշում -8...-11°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -18...-20°C, նախալեռնային շրջաններում՝ -9...-11°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ -3...-6°C (Կապան՝ -10°C), նախալեռնային շրջաններում՝ -10...-15°C, Շիրակում՝ -15...-19°C (Աշոցք՝ -22°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -15...-20°C, նախալեռնային շրջաններում՝ -9...-12°C, Գեղարքունիքում՝ -12...-17°C, (Մասրիկ՝ -19°C, Գավառ՝ 20°C,) Լոռիում՝ -11...-16°C, Արմավիրում՝ -9...-11°C, Արարատում՝ -7...-9°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -20...-22°C, նախալեռնային շրջաններում՝ -9...-12°C:



Ամսվա ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 8-12մմ (27-48%), Լոռիում՝ 3-11մմ (23-58%), Տավուշում՝ 5-10մմ (24-44%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 18-34մմ (70-76%), նախալեռներում՝ 12-19մմ (39-102%), Գեղարքունիքում՝ 8-20մմ (36-85%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 27-30մմ (54-60%), նախալեռներում՝ 17մմ (46%), Արմավիրում՝ 8-13մմ (46-62%), Արարատում՝ 10-13մմ, (43-79%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 30-32մմ (52%), նախալեռներում՝ 7-9մմ (32%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 8-18մմ (51-66%), նախալեռներում՝ 9-11մմ (35-44%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են 14-16-ին, 20-23-ն ընկած ժամանակաշրջանում. լեռնային շրջաններում՝ -18...-23°C, տեղ-տեղ՝ -25...-29°C, նախալեռնային շրջաններում՝ -13...-17°C, Արարատյան դաշտում՝ -8...-11°C, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ -8...-13°C:






Դեկտեմբերի 31-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունն Արագած Թ/Վ-ում կազմել է 70սմ, Ջերմուկում՝ 31սմ, Արագածոտնի և Կոտայքի լեռնային շրջաններում՝ 25-28սմ, Գեղարքունիքի մարզում՝ 9-15սմ., Շիրակում՝ 2-7սմ: Տավուշում, Լոռիում, Արարատում, Արմավիրում, Սյունիքում և Կոտայքի նախալեռներում ձյան շերտը բացակայում էր:

Աշնանացան ցորենի ձմեռման պայմանները

Ամսվա ընթացքում լեռնային, նախալեռնային և հովտային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է ձմեռային հանգստի շրջանում:



Գյումրիում, Ուրցածորում, Մերձավանում, Եղվարդում աշնանացանն անցավ ձմեռման թփակալած, մնացած շրջաններում՝ երրորդ տերևի և հանգուցային արմատների առաջացման փուլերում: Մերձավանում աշնանացան գարու թփակալման հանգուցում (հողի Յսմ շերտում) նվազագույն ջերմաստիճանը գրացվել է -12°C , սակայն այն վտանգավոր չի եղել, քանի որ մշակաբույսը գտնվել է թփակալման փուլում (զարգացած):

Ամսվա վերջին հովտային շրջաններում հողը սառած էր 11-18սմ:

Աշնանացանն անցել է ձմեռման հեղուկալ փուլերում

Երրորդ տերև	Հանգուցային արմատներ	Թփակալում
<i>Մարտունի</i>	<i>Ֆանտան</i>	<i>Գյունրի</i>
<i>Սիսիան</i>	<i>Օձուն</i>	<i>Մերձավան</i>
<i>Մասրիկ</i>		<i>Եղվարդ</i>
<i>Արթիկ</i>		<i>Ուրցաձոր</i>
<i>Արարատ</i>		
<i>Սրեփանավան</i>		